

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸԳՆԱԺԱՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

*Արա Կիրակոսյան**

Հոդվածում ներկայացվել է ՀՀ բանկային համակարգի ֆինանսական ռիսկերի գնահատման համալիր մեթոդաբանություն, որն ուղղված է բացահայտելու ճգնաժամերի պայմաններում բանկային համակարգում առաջ եկող հիմնախնդիրները: Հոդվածի շրջանակներում հաշվարկվել են ՀՀ բանկային համակարգի հիմնական ֆինանսական ռիսկերը ինչպես նախաճգնաժամային, այնպես էլ ճգնաժամի պայմաններում:

Ավանդական ակադեմիական միջավայրում գոյություն ունի այն պնդումը, որ ռիսկերի կառավարման ռազմավարությունները զրկված են որոշակի արժեքից: Մինչդեռ ժամանակակից ֆինանսների տեսությունը պնդում է, որ ռիսկերի կառավարումը, ինչպես նաև ֆինանսական քաղաքականությունը կարող են դառնալ առևտրային բանկի հաջողության հիմնական գրավակներ: Ռիսկերի կառավարման գործընթացն ապահովում է բանկերի կարիքները միջոցների կառավարման և ձեռքբերման առումով, ինչպես նաև թույլ է տալիս բանկերին ավելացնել իրենց ակտիվների արժեքը:

Պետք է նշել, որ ֆինանսական ռիսկերի կառավարման ռազմավարությունները որոշակի փոփոխություններ են ընդունում ճգնաժամի պայմաններում: Պետք է նշել, որ հոդվածում որպես նախաճգնաժամային ժամանակահատված վերցվել է 2006թ. 4-րդ եռամսյակից մինչև 2008թ. 3-րդ եռամսյակը ներառյալ, իսկ որպես ճգնաժամային ժամանակահատված վերցվել է 2008թ. 4-րդ եռամսյակից մինչև 2009թ. 4-րդ եռամսյակը ներառյալ:

Բանկային ֆինանսական ընդհանուր ռիսկ¹: Վերցնենք ROA , EM և ROA -ի ստանդարտ շեղման ցուցանիշները և տեղադրենք ընդհանուր բանկային ֆինանսական ռիսկի գնահատման բանաձևի մեջ: Էմպիրիկ ձևով դուրս բերված բանաձևն ունի հետևյալ տեսքը՝

$$RI = (E(ROA) + CAP)/S_{ROA}$$

* «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ վարչության նախագահ:

¹ Այս ռիսկի գնահատման բանաձևը մշակվել է Հանանի և Հանուեկի կողմից 1988թ. և օգտագործվել է Լիանգի ու Սավաժի (1990թ.), Էյսենբեյսի ու Քվասթի (1991թ.), Սինկիի ու Նեշի (1993թ.), Սինկիի ու Բլասկոյի (2001թ.) աշխատանքներում:

որտեղ $E(ROA)$ -ն ակտիվների շահութաբերության ցուցանիշն է, CAP -ն EM -ի հակադարձ մեծությունն է, որը հավասար է սեփական կապիտալի հարաբերությանը ընդհանուր ակտիվներին, S_{ROA} -ն ROA -ի ստանդարտ շեղումն է: Հաշվապահության տեսանկյունից այս բանաձևը բավական օգտակար է, քանի որ հաշվի է առնում ինչպես ROA -ն (հաշվապահական ցուցանիշ), այնպես էլ ROA -ի փոփոխությունը (ռիսկը բնութագրող ցուցանիշ ֆինանսներում), ինչպես նաև հաշվեկշռային կապիտալի համարժեքությունը (բանկերի հուսալիության և անվտանգության բազային պահանջ): Ընդհանուր բանկային ֆինանսական ռիսկը ներկայացված է ROA -ի ստանդարտ շեղմամբ և թույլ է տալիս իմանալ ինչպես պետք է նվազի բանկի հաշվապահական շահույթը, որպեսզի վերջինիս հաշվեկշռային շահույթը դառնա բացասական: RI -ի ցածր արժեքը վկայում է բանկային համակարգի բարձր ռիսկայնության, իսկ բարձր արժեքը՝ ցածր ռիսկայնության մասին:

Այժմ հաշվարկենք բանկային ֆինանսական ընդհանուր ռիսկը ՀՀ բանկային համակարգի համար ինչպես ձգնաժամի պայմաններում, այնպես էլ ձգնաժամային իրավիճակից առաջ:

Աղյուսակ 1

ՀՀ բանկային ֆինանսական ընդհանուր ռիսկի հաշվարկային արդյունքները ձգնաժամից առաջ և ձգնաժամի պայմաններում¹

Ցուցանիշ	Բանկային համակարգը ձգնաժամից առաջ	Բանկային համակարգը ձգնաժամի պայմաններում
$E(ROA)$	2,78875	1,368
CAP	0,225602	0,2106843
S_{ROA}	0,618603	0,3311646
RI	4,872838	4,7670683
$Pr(BVE<0)$	11,87227 %	11,36247 %

Աղյուսակ 1-ում նշված վերջին ցուցանիշը՝ $Pr(BVE<0)$ -ն, ներկայացնում է հաշվեկշռային անբավարարության հավանականությունը: Պետք է նշել, որ ձգնաժամի պայմաններում ՀՀ բանկային համակարգի հաշվեկշռային կապիտալի կորստի հավանականությունը փոքր է նախաձգնաժամային պայմաններում համապատասխան ցուցանիշից, ինչը հիմնականում պայմանավորված է նախաձգնաժամային պայմաններում ROA -ի ստանդարտ շեղման բարձր մակարդակով:

Ստացված արդյունքները վկայում են այն մասին, որ նախաձգնաժամային պայմաններում ՀՀ բանկային համակարգի հաշվեկշռային կապիտալի

¹ Այս և հետագա հաշվարկներն իրականացվել են հեղինակի կողմից:

կորստի հավանականությունն ավելի մեծ է եղել, քան ճգնաժամի պայմաններում: Նշված միտքն ունի մեկ հիմնավորում. դա պայմանավորված է ճգնաժամի պայմաններում բանկային համակարգի կառավարման ավելի զգույշ քաղաքականությամբ, ինչի արդյունքում *ROA*-ի ստանդարտ շեղման մակարդակը նվազել է:

Տոկոսադրույքի ռիսկ: Տոկոսադրույքների փոփոխման դեպքում փոփոխվում են տրամադրված վարկերի և վերցված ավանդների հետ կապված գործարքների նախնական արժեքները (*Աղյուսակ 2*): Այսպես, տոկոսադրույքի աճի դեպքում հաստատուն տոկոսադրույքով տրամադրված վարկի արժեքն ընկնում է: Գնի բացասական փոփոխությունը վատ տեղեկատվություն է հանդիսանում վարկատուների համար: Միևնույն ժամանակ, վարկատուների (ոչ փոխառուների) համար տոկոսադրույքի աճի դեպքում հնարավորություն է առաջանում տրամադրել նոր վարկեր ավելի բարձր տոկոսադրույքով, այլ կերպ ասած՝ վերաներդնել սեփական կապիտալը: Հակառակ դեպքում, տոկոսադրույքի նվազման պարագայում աճում է տրամադրված վարկի արժեքը: Արժեքի աճը դրական ազդեցություն է ունենում վարկատուների վրա: Սակայն վարկատուները (ոչ փոխառուները) տվյալ իրավիճակում ստիպված պետք է լինեն վերաներդնել իրենց կապիտալն ավելի ցածր տոկոսադրույքով, ինչն էլ բացասաբար կանդրադառնա բանկի շահութաբերության մակարդակի վրա:

Աղյուսակ 2

Ավանդների և վարկերի վրա տոկոսադրույքի ռիսկի ազդեցությունը

Ազդեցություն վարկային պորտֆելի վրա	
<i>Տոկոսադրույքի աճ</i>	<i>Արդյունք</i>
Բացասական ազդեցություն գնի վրա	Առկա վարկերն էժանանում են
Վերաներդրման դրական ազդեցություն	Նոր վարկերի արժեքն ավելի մեծ է
<i>Տոկոսադրույքի նվազում</i>	<i>Արդյունք</i>
Դրական ազդեցություն գնի վրա	Առկա վարկերը թանկանում են
Վերաներդրման բացասական ազդեցություն	Նոր վարկերի արժեքը նվազում է
Ազդեցություն ավանդների վրա	
<i>Տոկոսադրույքի աճ</i>	
Միջոցների ժամկետից շուտ դուրսհանում	
Բանկերը փորձում են ներգրավել նոր ավանդատուներ ավելի բարձր տոկոսադրույքով, հակառակ պարագայում բանկում առաջանում է իրացվելիության հիմնախնդիր	
<i>Տոկոսադրույքի նվազում</i>	
Վերաֆինանսավորման արդյունքում տրամադրված վարկերի ժամկետից շուտ մարում	
Բանկերը պետք է տրամադրեն նոր վարկեր ավելի ցածր տոկոսադրույքով կամ կրճատեն հաշվապահական հաշվեկշիռը	

Ճգնաժամի պայմաններում տոկոսադրույքի ռիսկի ազդեցությունը ՀՀ բանկային համակարգի վրա հաշվարկելու համար կառուցվել են հետևյալ հավասարումները՝

$$NII = k_1 * (L-D) + b_1,$$

$$(L-D) = k_2 * (r) + b_2,$$

որտեղ *NII*-ն բանկային համակարգի զուտ շահույթն է, *L*-ը տրամադրված վարկերի միջին տոկոսադրույքն է, *D*-ն ավանդների միջին տոկոսադրույքն է, *r*-ը վերաֆինանսավորման տոկոսադրույքն է, *k1*, *k2*-ը սահմանային հակվածության ցուցանիշներն են, իսկ *b1*, *b2*-ը ազատ անդամներն են:

Հաշվարկներն իրականացվել են նախաճգնաժամային և ճգնաժամային պայմանների համար, որից հետո համեմատվել են երկու հավասարումների սահմանային հակվածության ցուցանիշները:

Հաշվարկները ներկայացված են *Աղյուսակ 3-ում*:

Աղյուսակ 3

ՀՀ բանկային համակարգի տոկոսադրույքի ռիսկի հաշվարկման արդյունքները ճգնաժամից առաջ և ճգնաժամի պայմաններում

Ցուցանիշ	Բանկային համակարգը ճգնաժամից առաջ	Բանկային համակարգը ճգնաժամի պայմաններում
Առաջին հավասարում		
<i>k1</i>	-418261,1	-1716263
Երկրորդ հավասարում		
<i>k2</i>	-1,227458	-1,076597

Աղյուսակ 3-ից երևում է, որ ըստ առաջին հավասարման լուծման արդյունքների, վարկերի և ավանդների տոկոսադրույքների մեկ տոկոսի փոփոխության սահմանային հակվածությունն ըստ բանկային համակարգի զուտ շահույթի ճգնաժամի պայմաններում ավելացել է 4,1 անգամ: Ստացված արդյունքը վկայում է այն մասին, որ ճգնաժամի պայմաններում բանկային համակարգի շահութաբերությունը խիստ զգայուն է եղել տոկոսադրույքի նկատմամբ և տոկոսադրույքի մեկ տոկոսով ավելացման դեպքում շահութաբերությունն ընկել է 4,1 անգամ, ինչը վկայում է տոկոսադրույքի ռիսկի մեծացման մասին: Երկրորդ հավասարման արդյունքները վկայում են այն մասին, որ ճգնաժամի պայմաններում վերաֆինանսավորման տոկոսադրույքի մեկ միավորի փոփոխման դեպքում վարկերի և ավանդների տոկոսադրույքների տարբերությունն ավելի քիչ է նվազել, քան նախաճգնաժամային փուլում: Սակայն այս ցուցանիշը չի նպաստել տոկոսադրույքի ռիսկի նվազեցմանը, այլ հակառակը:

Իրացվելիության ռիսկ: Բանկերին իրացվելիություն անհրաժեշտ է, մասնավորապես, հաճախորդներին տրամադրելու համար:

Փորձենք գնահատել իրացվելիության ռիսկը ՀՀ բանկային համակարգի համար ճգնաժամի պայմաններում: Իրացվելիության ռիսկի գնահատման մեթոդաբանությունը վերցվել է *Bank of New England*-ի փորձից և տեղայնացվել ՀՀ բանկային համակարգի համար: Հոդվածի շրջանակներում իրացվելիության ռիսկի գնահատման առումով *Bank of New England*-ի փորձը վերցվել է որպես մի շարք բանկային և ֆինանսական ճգնաժամեր հաղթահարած բանկ:

Իրացվելիության ռիսկը գնահատվել է հետևյալ հավասարման միջոցով՝
 $LR = k_1 * A + k_2 * D + k_3,$

որտեղ *LR*-ը՝ իրացվելիության գործակիցն է, որը հավասար է ավանդների հարաբերությանն ակտիվներին, *A*-ն՝ ակտիվների հավելաճի ցուցանիշն է, *D*-ն՝ ավանդների հավելաճի ցուցանիշն է, *k*₁, *k*₂-ը համապատասխանաբար ակտիվների և ավանդների հավելաճի սահմանային հակվածություններն են, իսկ *k*₃-ը դիտարկվող մոդելի ազատ անդամն է:

Հաշվարկներն իրականացվել են նախաճգնաժամային և ճգնաժամային ժամանակահատվածների համար:

Հաշվարկման արդյունքները բերված են *Աղյուսակ 4-ում*:

Աղյուսակ 4

ՀՀ բանկային համակարգի իրացվելիության ռիսկի հաշվարկման արդյունքները ճգնաժամից առաջ և ճգնաժամի պայմաններում

Ցուցանիշ	Բանկային համակարգը ճգնաժամից առաջ	Բանկային համակարգը ճգնաժամի պայմաններում
k ₁	-1,11E-10	-1,64E-10
k ₂	2,20E-10	2,82E-10

Ինչպես երևում է *Աղյուսակ 4-ից*, ակտիվների 1000 դրամ աճը հանգեցնում է իրացվելիության գործակցի նվազման, իսկ ավանդների 1000 դրամ աճը բերում է իրացվելիության գործակցի աճի, ինչը բխում է իրացվելիության գործակցի բանաձևից, հետևաբար կարող ենք պնդել, որ հաշվարկային արդյունքները ճիշտ են: Ճգնաժամի պայմաններում ակտիվների սահմանային հակվածությունն աճել է 1,47 անգամ, իսկ ավանդների սահմանային հակվածությունը՝ 1,28 անգամ: Այլ հավասար պայմաններում ճգնաժամի ժամանակահատվածում ակտիվների և ավանդների հազար դրամ աճի դեպքում իրացվելիության գործակիցը կաճի 1,18-ով, ի տարբերություն նախաճգնաժամային ժամանակահատվածի, երբ իրացվելիության գործակիցը կաճեր 1,1-ով: Այլ կերպ ասած՝ ՀՀ բանկային համակարգի իրացվելիության ռիսկը ճգնաժամի պայմաններում աճել է 7%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է ճգնաժամի պայմաններում ավանդների ծավալի կտրուկ աճով:

Շուկայական ռիսկ: *J.P. Morgan* բանկն իր «*RiskMetrics*» գրքում շուկայական ռիսկը բնորոշում է որպես շահույթի չափերի անորոշություն, որը պայմանավորված է շուկայական պայմանների փոփոխությամբ, ինչն էլ իր հերթին ազդում է ակտիվների գնի, տոկոսադրույքի, տատանողականության և շուկայական իրացվելիության վրա:

RiskMetrics J.P.Morgan-ը ունիվերսալ մեթոդ է՝ հիմնված տատանողականության, կանխատեսումների և կոռելացիայի վրա, որոնց միջոցով հաշվարկվում է շուկայական ռիսկը: Նմանատիպ մեթոդներից է *CAPM*-ը կամ կապիտալ ակտիվների գնահատման մոդելը, որի միջոցով գնահատվում է համակարգային ռիսկը, կամ որ նույնն է՝ ըստ պորտֆելային տեսության շուկայական ռիսկը բետա գործակցի միջոցով:

CAPM մոդելն ունի հետևյալ տեսքը՝

$$R = R_f + \beta(R_m - R_f),$$

որտեղ *R*-ը սպասվող եկամտաբերության չափն է, *R_f*-ը ՊԿՊ-ների եկամտաբերության նորմն է, *R_m*-ը բանկային համակարգի շահութաբերության չափն է, իսկ *β*-ն (*R_m-R_f*)-ի սահմանային հակվածությունն է:

Հաշվարկման ժամանակ *CAPM* մոդելի օգնությամբ հաշվարկված *R*(1-β)* ցուցանիշը համեմատվել է հասարակ ռեգրեսիոն հավասարման արդյունքում ստացված *a* գործակցի հետ: Հասարակ ռեգրեսիոն հավասարումն ունի հետևյալ տեսքը՝ $R = a + \beta * R_m$:

Հաշվարկներն իրականացվել են նախաճգնաժամային և ճգնաժամային ժամանակահատվածների համար:

Հաշվարկման արդյունքները բերված են *Աղյուսակ 5-ում*:

Աղյուսակ 5

ՀՀ բանկային համակարգի շուկայական ռիսկի հաշվարկման արդյունքները ճգնաժամից առաջ և ճգնաժամի պայմաններում

Ցուցանիշ	Բանկային համակարգը ճգնաժամից առաջ	Բանկային համակարգը ճգնաժամի պայմաններում
β	0,98	0,99
$a > R_f(1-\beta)$	+	+
$a = R_f(1-\beta)$	-	-
$a < R_f(1-\beta)$	-	-

Ինչպես երևում է *Աղյուսակ 5-ից*, ճգնաժամի պայմաններում ՀՀ բանկային համակարգի շուկայական ռիսկը բնութագրող բետա գործակցի արժեքը մեծացել է մոտենալով մեկին, ինչը նշանակում է, որ բանկային համակարգի եկամտաբերությունը մոտենում է շուկայականի մակարդակին: Սակայն մյուս կողմից պետք է փաստել, որ շուկայական ռիսկի ազդեցության առումով ՀՀ բանկային համակարգը մնացել է հիմնականում նույն մակարդակին թե՛

ճգնաժամի պայմաններում, թե՛ նախաճգնաժամային իրավիճակում:

Աղյուսակ 5-ից երևում է նաև, որ ինչպես ճգնաժամի, այնպես էլ մինչ-ճգնաժամային իրավիճակում ՀՀ բանկային համակարգի եկամտաբերությունն ավելի բարձր է եղել, քան նշված ժամանակահատվածում ռեզրեսիոն հավասարմամբ կարելի էր կանխատեսել:

Արտարժույթային ռիսկ: Արտարժույթային ռիսկերը երկու կարևոր ասպեկտով են հարաբերվում բանկային գործունեության հետ՝

- պահել արտարժույթային երկար կամ կարճ դիրքերը, երբ առևտրային բանկն իրականացնում է առևտրային գործարքներ,
- պահել արտարժույթով արտահայտված ակտիվներն ու պասիվները:

Եթե բանկի բաց դիրքը որոշակի արժույթով հավասար չէ գրոյի, այդ դեպքում բանկը կամ կշահի, կամ կկորցնի արտարժույթի անսպասելի տատանումից: Որքան մեծ տատանողականությամբ է աչքի ընկնում արտարժույթը, այդքան ռիսկային են նման դիրքերը:

Արտարժույթային ռիսկի գնահատման համար անհրաժեշտ է նախ գնահատել արտարժույթի տատանողականությունը հետևյալ բանաձևով՝

$$SD(E_{ij}^t) = SD \left(\ln \frac{E_{ij}^t}{E_{ij}^{t-1}} \right).$$

որտեղ E_{ij}^t -ն ժամանակի t -րդ պահին արտարժույթի անվանական փոխարժեքն է, E_{ij}^{t-1} -ը ժամանակի $t-1$ -րդ պահին արտարժույթի անվանական փոխարժեքն է, SD -ն ստանդարտ շեղումն է, $SD(E_{ij})$ -ն իրար նախորդող ժամանակահատվածներում արձանագրված անվանական փոխարժեքների հարաբերության լոգարիթմի ստանդարտ շեղումն է:

ՀՀ բանկային համակարգի համար արտարժույթային ռիսկը հաշվարկվել է հետևյալ բանաձևով՝

$$NII = k \cdot SD(E_{ij}) + b,$$

որտեղ $SD(E_{ij})$ -ն իրար նախորդող ժամանակահատվածներում արձանագրված դոլար/դրամ անվանական փոխարժեքների հարաբերության լոգարիթմի ստանդարտ շեղումն է, NII -ն ՀՀ բանկային համակարգի շահույթի չափն է, k -ն $SD(E_{ij})$ -ի սահմանային հակվածությունն է, իսկ b -ն հավասարման ազատ անդամն է:

Հաշվարկներն իրականացվել են նախաճգնաժամային և ճգնաժամային ժամանակահատվածների համար: Հաշվարկման համար ընտրվել է ԱՄՆ դոլար/դրամ փոխարժեքը որպես ՀՀ շուկայում ամենալայն տարածում գտած, ինչպես նաև բարձր տատանողականություն ունեցող արժույթ:

Հաշվարկման արդյունքները բերված են *Աղյուսակ 6-ում*:

Աղյուսակ 6

ՀՀ բանկային համակարգի արտարժույթային ռիսկի հաշվարկման արդյունքները ճգնաժամից առաջ և ճգնաժամի պայմաններում

Ցուցանիշ	Բանկային համակարգը ճգնաժամից առաջ	Բանկային համակարգը ճգնաժամի պայմաններում
k ₁	606	89300

Աղյուսակ 6-ից երևում է, որ դոլար/դրամ փոխարժեքի տատանողականության 0.0000001 կետով փոփոխման դեպքում ՀՀ բանկային համակարգի շահույթը մինչճգնաժամային փուլում փոփոխվել է 606000 դրամով, իսկ ճգնաժամի պայմաններում՝ 89300000 դրամով: Տարբերությունը կազմում է 147.35 անգամ, ինչը խիստ մտահոգիչ է ՀՀ բանկային համակարգի կայուն գործունեություն ծավալելու համատեքստում:

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ արտարժույթային տատանումները ՀՀ-ում ոչ այնքան պայմանավորված էին ֆինանսական ճգնաժամի հետևանքներով, որքան ունեին ներքին սպեկուլյատիվ պատճառներ և հիմնականում պայմանավորված էին ԿԲ-ի կողմից իրականացվող չստերիլիզացված ինտերվենցիաներով:

Գործառնական ռիսկ: Գործառնական ռիսկը անորոշություն է, որը պայմանավորված է ուղղակի և անուղղակի կորուստներով, որոնք առաջ են գալիս համակարգային սխալից, անձնակազմի սխալից կամ արտաքին միջավայրի կտրուկ փոփոխության արդյունքում:

Ֆինանսական և բանկային ճգնաժամերն իրենց հերթին ևս հանդիսանում են գործառնական ռիսկ ծնող պատճառ: Ասվածի համատեքստում ընթացիկ ֆինանսատնտեսական ճգնաժամը հանդիսացել է ՀՀ բանկային համակարգի համար գործառնական ռիսկ ծնող պատճառ:

Հաշվարկների համար օգտագործվել է հետևյալ մոդելը՝

$$NII = k \cdot D + b,$$

որտեղ *NII*-ն ՀՀ բանկային համակարգի շահույթի չափն է, *D*-ն կեղծ փոփոխական է, որը հավասար է մեկի ճգնաժամի պայմաններում և հավասար է զրոյի մնացած դեպքերում, *k*-ն կեղծ փոփոխականի սահմանային հակվածության ցուցանիշն է, երբ կեղծ փոփոխականը հավասար է մեկի, իսկ *b*-ն հավասարման ազատ անդամն է:

Հաշվարկներն իրականացվել են նախաճգնաժամային և ճգնաժամային ժամանակահատվածների համար:

Հաշվարկման արդյունքները բերված են *Աղյուսակ 7-ում*:

Ինչպես երևում է *Աղյուսակ 7-ից*, ճգնաժամի պայմաններում ՀՀ բանկային համակարգում գործառնական ռիսկի ծավալներն աճել են: Խոսքն այն մասին է, որ ճգնաժամի ժամանակահատվածում ՀՀ բանկային համակարգի շահույթի ծավալները կրճատվել են 27 մլրդ դրամով:

Աղյուսակ 7

ՀՀ բանկային համակարգի գործառնական ռիսկի հաշվարկման արդյունքները ճգնաժամից առաջ և ճգնաժամի պայմաններում

Փոփոխական	Գործակիցներ	Ստանդարտ սխալ	տ-վիճակագրություն	Հավանականություն
Կախյալ անդամ	-27001542	276767	-2.836563	0.0001
Ազատ անդամ	37580219	17201	1.87739	0.01
R ²	0,598			

Ամփոփելով ՀՀ բանկային համակարգի համար հաշվարկված ֆինանսական ռիսկերը՝ պետք է նշել, որ ճգնաժամի պայմաններում առավել մեծ տեմպերով աճել են արտարժույթի, տոկոսադրույքի և գործառնական ռիսկերը:

Այսպիսով, ճգնաժամի պայմաններում ՀՀ բանկային համակարգի ռիսկերի արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է իրականացնել համապատասխան միջոցառումներ՝ նվազեցնելու համար արտարժույթի, տոկոսադրույքի և գործառնական ռիսկերը:

Մեպտեմբեր, 2010թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Froot, Kenneth A., David S. Scharfstein, and Jeremy C. Stein*, A Framework for Risk Management, Harvard Business Review, 1994, November/December, pp. 91-102.
2. Overview of Interest Rate Risk: An OCC Staff Paper, 2009. Multinational Banking Department, Office of the Comptroller of the Currency, (December).
3. Introduction to RiskMetrics (2004). New York: J.P.Morgan.
4. *Eun, Cheol S. and Bruce G. Resnick*, International Financial Management. New-York: Irwin McGraw-Hill, 2008.

ОЦЕНКА ФИНАНСОВЫХ РИСКОВ БАНКОВСКОЙ СИСТЕМЫ РА В ПЕРИОД КРИЗИСА

Արա Կիրակոսյան

Резюме

В статье представлена комплексная методология оценки финансовых рисков банковской системы РА, которая нацелена на выявление основных проблем банковской системы во время кризиса. В рамках данной статьи оценены основные финансовые риски банковской системы РА как до начала, так и в ходе кризиса.